**ՀՀ ԿԳՄՍՆ «ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ԾԻԳ ՊՀ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/32**

ք.Երևան «10» 10 2025թ.

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ը ի դեմս տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Հովհաննիսյանի, ով գործում է ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Անտարես» ՍՊԸ-ն, ի դեմս գործադիր մարմնի ղեկավար՝ Ա. Մարտիրոսյանի, ով գործում է «Անտարես» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և Պայմանագրի 1.2 հավելվածով սահմանված դպրոցների հասցեներով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1.1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և տվյալ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

1.2. Սույն Պայմանագրով սահմանված կարգով Ապրանքի մատակարարումն իր մեջ ներառում է նաև Վաճառողի կողմից Ապրանքը Գնորդին մինչև 1.2 հավելվածով սահմանված դպրոցների հասցեներով մատակարարելուց առաջ Գնորդի հրամանով ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) կողմից յուրաքանչյուր ապրանքատեսակի ընտրանքային կարգով թվով 5 նմուշի համապատասխանության ստուգումը՝ տեխնիկական բնութագրին:

1.3. Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 1 հավելվածով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝

2.1.8 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.8.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Սույն Պայմանագրով սահմանված կարգով 1.2 հավելվածում առկա դպրոցների հասցեներով հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և Պայմանագրի 1.2 հավելվածով սահմանված դպրոցների հասցեներով մատակարարված Ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և Պայմանագրի 1.2 հավելվածով սահմանված դպրոցների հասցեներով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և Պայմանագրի 1.2 հավելվածով սահմանված դպրոցների հասցեներով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ Պայմանագրով նախատեսված ժամկետներում և Պայմանագրի 1.2 հավելվածով սահմանված դպրոցների հասցեներով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ Պայմանագրի 1.2 հավելվածով սահմանված դպրոցների հասցեներով մատակարարված և պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 7,020,000.00 (յոթ միլիոն քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 3.3 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Պայմանագրի 1.1 հավելվածով ըստ աշակերտների խտության սահմանված Ապրանքը դպրոցների կողմից հանձնման-ընդունման ակտերի և դրանց հիման վրա կազմված Հավելված 3-ով սահմանված հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Պայմանագրի Հավելված 3-ով սահմանված հանձնման-ընդունման արձանագրության կազմման համար հիմք է հանդիսանում Գնորդի կողմից սահմանված ձևաչափի Վաճառողի և Պայմանագրի 1.2 հավելվածով սահմանված դպրոցների միջև ստորագրվելիք հանձնման-ընդունման ակտերի, որի օրինակելի ձևաչափը մշակվում և տրամադրվում է Գնորդի կողմից նախապես՝ Հանձնաժողովի կողմից Պայմանագրի 1.2 կետով սահմանված ստուգումը իրականացնելուց հետո:

Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Վաճառողի և Պայմանագրի 1.2 հավելվածով սահմանված դպրոցների միջև ստորագրված հանձնման-ընդունման ակտերի և դրանց հիման վրա Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված Հավելված 3.1-ով սահմանված Ակտով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի

վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.8 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ խախտման կամ ...

մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում սույն ենթակետի կիրառման դեպքում գործակալ չի կարող հանդիսանալ ՀՀ կառավարության 20.06.2025թ. թիվ 818-Ա որոշմա ն 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված կազմակերպությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը պայմանագրի

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ | «Անտարես» ՍՊԸ |
| Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ս. Վրացյան 83 | Հասցե՝ Մաշտոցի 50ա/1 |
| Բանկ՝ ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ՝ 900011048413 | Հ/Հ՝ 1930032650660100 |
| ՀՎՀՀ՝ 02550991 | ՀՎՀՀ՝ 02519531 |
| Տնօրենի պաշտոնակատար՝ | գործադիր մարմնի ղեկավար՝ |
| ------------------------------- Գ. Հովհաննիսյան | ------------------------------- Ա. Մարտիրոսյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
«10» 10 2025թ. կնքված
ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/32 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը* | տեխնիկական բնութագիրը ** | չափման միավորը | միավոր գինը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 39181200/25 | Աշխարհագրության լաբորատորիայի համար պարագաներ | Ներկայացվում է ստորև, Հավելված 1-ով | Ներկայացվում է ստորև, Հավելված 1-ով | լրակազմ | 7,020,000.00 | 7,020,000.00 | 1 | Ներկայացվում է ստորև, Հավելված 2-ով | 1 | Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2025թ-ի նոյեմբերի 20-ը ներառյալ*** |

ընտրված մասնակցի հայտով ներկայացվել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մոդել ունեցող ապրանքներ, ապա դրանցից ր գնահատվածները ներառվում են սույն հավելվածում:
ումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջների համաձայն ցանկացած հղման դեպքում կիրառելի են «կամ համարժեք» բառերը:
ատակարարը պետք է ապրանքը տեղափոխի ՀՀ-ում իր կամ իր կողմից վարձակալած տարածք, որտեղ ապրանքները ընտրանքային կարգով պետք է ենթարկվեն ստուգման համապատասխանությանը ագրին (յուրաքանչյուր ապրանքատեսակից ընտրանքային կարգով թվով 5 նմուշի համապատասխանության ստուգում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին), որի հաստատումից հետո նոր առաքվեն դպրոցների ցանկում նշված հասցեներով: Մատակարարման վերջնաժամկետն է 2025թ-ի նոյեմբերի 20-ը ներառյալ, որն իր մեջ ներառում է համապատասխանության ստուգումը պահեստում ագույնը 10 աշխատանքային օր):
**նքի տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և փորձարկումը կատարում է մատակարարը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ | «Անտարես» ՍՊԸ |
| Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ս. Վրացյան 83 | Հասցե՝ Մաշտոցի 50ա/1 |
| Բանկ՝ ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ՝ 900011048413 | Հ/Հ՝ 1930032650660100 |
| ՀՎՀՀ՝ 02550991 | ՀՎՀՀ՝ 02519531 |
| Տնօրենի պաշտոնակատար՝ | գործադիր մարմնի ղեկավար՝ |
| ---------------------------- Գ. Հովհաննիսյան | ---------------------------- Ա. Մարտիրոսյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1.1
«10» 10 2025թ. կնքված
ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/32 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Անվանում | | Տեխնիկական բնութագրեր և չափանիշներ | Չափի միավոր | Հիմնական դպրոցներ՝ 20-աշակերտ խմբությամբ | Միջնակարգ դպրոցներ՝ 5-աշակերտ խմբությամբ | Միջնակարգ դպրոցներ՝ 10-աշակերտ խմբությամբ | Միջնակարգ դպրոցներ՝ 20-աշակերտ խմբությամբ | Ընդհանուր քանակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 3 | 2 | 7 | 15 | |
| Թեմատիկ էլեկտրոնային նկարներ և անիմացիոն էսքիզներ (քարտեզագրական պրոյեկցիաներ, Արեգակնային համակարգ, Երկրագնդի կառուցվածքը, քամիների տեսակներ, լանջային պրոցեսներ, հրաբուխ, երկրակեղևի կառուցվածք, ռելիեֆի տիպեր) | «Անտարես» ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն | Թեմատիկ նկարների և անիմացիոն էսքիզների ուսուցողական օրինակների ցուցադրություն հայերեն լեզվով, համապատասխան գունավորմամբ, USB ֆլեշ կրիչով (թեմատիկ նկարները JPG ձևաչափով):<br>• Միևնույն նկարի վրա կտրվեն գլանային, կոնային, ազիմուտային, բազմակող պրոյեկցիաները:<br>• Արեգակնային համակարգը կտրվի մեկ անիմացիոն էսքիզի վրա, պահպանելով մոլորակների մեծությունների տարբերությունները:<br>• Երկրագնդի կառուցվածքը կտրվի մեկ նկարի վրա, առանձնացվում են աշխարհագրական թաղանթի ոլորտները՝ քարոլորտը, ջրոլորտը, մթնոլորտը և կենսոլորտը, ինչպես նաև միևնույն սխեմայում գունային երանգավորմամբ տարանջատվում՝ քարոլորտի և մթնոլորտի կառուցվածքը, տերմիններով նշվում են ոլորտներն ու ենթոլորտները, մետրերով՝ դրանց շերտերի հզորությունը:<br>• Քամիների տեսակների (պասսատներ, մուսսոններ, բրիզներ, | Հատ | 1 | 1 | 1 | 1 | 27 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | լեռնահովտային քամիներ, ցիկլոններ) առաջացման սխեմաներն առանձին կտրվեն տարբեր անիմացիոն էսքիզների վրա:<br>• Լանջային պրոցեսները (սողանք, քարաթափվածք, փլուզում, սոլիֆլյուկցիա) կտրվեն տարբեր անիմացիոն էսքիզների վրա:<br>• Հրաբխի անիմացիոն էսքիզի երկայնակի կտրվածքում կլինեն գունային առանձնացմամբ, կերևան մագման, լավան, մղանցքը, խառնարանը, լավայի և մոխրի շերտերը, կողային խառնարանները:<br>• Երկրակեղևի կառուցվածքի նկարի երկայնակի կտրվածքում գունային առանձնացմամբ կերևան օվկիանոսային ու ցամաքային կեղևների շերտերը՝ միջնապատյանը, բազալտե, գրանիտե և նստվածքային շերտերը:<br>• Ռելիեֆի տիպերի նկարը կարտահայտի լեռը, հարթավայրը, հովիտն ու ջրագրությունը գունային համապատասխան երանգավորմամբ: | | | | | | |
| ՀՀ միներալների նմուշների հավաքածու | «Անտարես» ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն | ՀՀ միներալների նմուշները (մոլիբդենիտ, պղնձի հանքաքար (խալկոպիրիտ), կապար (գալենիտ), քվարց, պիրիտ, ծծումբ (ծծմբի հանքաքար), քարաղ, գիպս, բազալտ, անդեզիտ, գրանիտ, օբսիդիան, պեմզա, տուֆ, տրավերտին, ֆելզիտ, կրաքար, մարմար, դոլոմիտ, մետամորֆային թերթաքար, բարիտ, դիատոմիտ, նռնաքար, պեռլիտ, ագաթ) ցուցադրելու համար կլինի պատի | Հատ | 1 | 1 | 1 | 1 | 27 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ցուցափեղկ 5 մմ հաստությամբ օրգանական ապակուց, չափը՝ 750 x 250 x 900 մմ, որը կունենա 5 հորիզոնական և 5 ուղղահայաց բաժանում: Ցուցափեղկը կունենա փայտյա, լաքապատ և մետաղական, մոխրագույն հենարան: Հավաքածուի նմուշների չափերը կլինեն՝ 50 x 120 x 120 մմ (± 5 մմ), բացառությամբ ագաթից: Յուրաքանչյուր նմուշ կունենա թվանշում: Նմուշների դիմաց՝ ցուցափեղկի դիմերեսին գրված կլինի դրա թվանիշն ու անվանումը հայերեն լեզվով: Հավաքածուի նմուշների ճակատային մասը և այն հատվածը որով տեղակայվելու է ցուցափեղկի վրա հարթեցված կլինի, իսկ մնացած մասերով կպահպանի բնական տեսքը (նմուշը չի լինի բոլոր կողմերով հարթեցված, հղկված ուղանկյունանիստ): Միներալներից ագաթը կներկայացվի 50 x 120 x 120 մմ-անոց բենտոնիտային կավի բրիկետով, որի մեջ տեղադրված լինի 4 սմ տրամագծից մեծ չափերով ագաթ և բնական, և հարթեցված տեսքով:<br>ՀՀ միներալների նմուշների հավաքածուն կամրացվի աշխարհագրության լաբորատորիայի պատին՝ աշակերտներին տեսանելի հատվածում: | | | | | | |
| ՀՀ հողերի նմուշների հավաքածու | «Անտարես» ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն | ՀՀ հողերի նմուշները (լեռնամարգագետնային, մարգագետնատափաստանային, անտառային գորշ, անտառային դարչնագույն, սևահող, | Հատ | 1 | 1 | 1 | 1 | **27** |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | շագանակագույն, կիսաանապատային գորշ, աղուտ-ալկալի) ցուցադրելու համար կլինեն գլանաձև՝ 80 մմ տրամագծով, 200 մմ բարձրությամբ, 2.8 մմ հաստությամբ, փակ բերանով, թափանցիկ ամբողջական անոթներ պլաստմասսայից և դրանք պատի վրա տեղակայելու լաքապատ փայտյա ստենդ: Ստենդը կունենա կախիչներ և մետաղական, մոխրագույն հենարան: Անոթների վրա հայերեն լեզվով գրված կլինեն հողերի անվանումները: Անոթները կլինեն ոչ գունավոր, որպեսզի հստակ արտահայտվի հողի գույնն ու կառուցվածքը:<br>ՀՀ հողերի նմուշների հավաքածուն կամրացվի աշխարհագրության լաբորատորիայի պատին՝ աշակերտներին տեսանելի հատվածում: | | | | | | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ս. Վրացյան 83
Բանկ՝ ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ՝ 900011048413
ՀՎՀՀ՝ 02550991

Տնօրենի պաշտոնակատար՝

---------------------------- Գ. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Անտարես» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 50ա/1
Բանկ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930032650660100
ՀՎՀՀ՝ 02519531

գործադիր մարմնի ղեկավար՝

---------------------------------------- Ա. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.2
«10» 10 __________ 2025թ. կնքված
ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/32 ծածկագրով պայմանագրի

**ՑԱՆԿ**
**մատակարարման հասցեների**

| Հ/հ | Մարզ | Դպրոց | Հասցե |
|---|---|---|---|
| **Հիմնական դպրոցներ՝ 20-աշակերտ խտությամբ** | | | |
| 1 | Լոռի | ք. Ալավերդու Հ. Թումանյանի անվան թիվ 2 հ/դ | քաղաք Ալավերդի |
| 2 | Շիրակ | ք. Արթիկի թիվ 2 հ/դ | քաղաք Արթիկ |
| 3 | Շիրակ | ք. Գյումրու Օյունջյանի միջնակարգ դպրոց-վարժարան | քաղաք Գյումրի |
| **Միջնակարգ դպրոցներ՝ 5-աշակերտ խտությամբ** | | | |
| 1 | Սյունիք | գ. Աճանանի մ/դ | գյուղ Աճանան |
| 2 | Սյունիք | գ. Քարաշենի մ/դ | գյուղ Քարաշեն |
| **Միջնակարգ դպրոցներ՝ 10-աշակերտ խտությամբ** | | | |
| 1 | Գեղարքունիք | գ. Շատջրեքի մ/դ | գյուղ Շատջրեք |
| 2 | Սյունիք | գ. Ախլաթյանի մ/դ | գյուղ Ախլաթյան |
| 3 | Լոռի | գ. Արջիովիտի /Ղուրսալիի/ մ/դ | գյուղ Արջիովիտ /Ղուրսալի/ |
| 4 | Սյունիք | գ. Գորայքի մ/դ | գյուղ Գորայք |
| 5 | Շիրակ | գ. Բերդաշենի մ/դ | գյուղ Բերդաշեն |
| 6 | Սյունիք | ք. Կապանի թիվ 8 մ/դ | քաղաք Կապան |
| 7 | Սյունիք | գ. Քարահունջի մ/դ | գյուղ Քարահունջ |
| **Միջնակարգ դպրոցներ՝ 20-աշակերտ խտությամբ** | | | |
| 1 | Արարատ | գ. Աբովյանի մ/դ | գյուղ Աբովյան |
| 2 | Արարատ | գ. Լանջազատի մ/դ | գյուղ Լանջազատ |
| 3 | Արարատ | գ. Նարեկի մ/դ | գյուղ Նարեկ |
| 4 | Արարատ | գ. Եղեգնավանի մ/դ | գյուղ Եղեգնավան |
| 5 | Արարատ | գ. Սիսի մ/դ | գյուղ Սիս |
| 6 | Արարատ | գ. Արևշատի մ/դ | գյուղ Արևշատ |
| 7 | Արարատ | գ. Դիմիտրովի մ/դ | գյուղ Դիմիտրով |
| 8 | Արարատ | գ. Արբաթի Հ. Զաքարյանի անվան մ/դ | գյուղ Արբաթ |
| 9 | Գեղարքունիք | գ. Գեղհովիտի թիվ 2 մ/դ | գյուղ Գեղհովիտ |
| 10 | Սյունիք | գ. Ձագիկավանի մ/դ | գյուղ Ձագիկավան |
| 11 | Շիրակ | գ. Կառնուտի մ/դ | գյուղ Կառնուտ |
| 12 | Շիրակ | գ. Աշոցքի մ/դ | գյուղ Աշոցք |
| 13 | Լոռի | գ. Լեռնապատի Ե. Դալլաքյանի անվան մ/դ | գյուղ Լեռնապատ |
| 14 | Լոռի | գ. Արևաշողի մ/դ | գյուղ Արևաշող |
| 15 | Լոռի | գ. Վարդաբլուրի մ/դ | գյուղ Վարդաբլուր |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ս. Վրացյան 83
Բանկ՝ ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ՝ 900011048413
ՀՎՀՀ՝ 02550991

Տնօրենի պաշտոնակատար՝

------------------------------ Գ. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Անտարես» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 50ա/1
Բանկ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 193003265066010
ՀՎՀՀ՝ 02519531

գործադիր մարմնի ղեկավար՝

------------------------------ Ա. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 2*
*«10» 10 2025թ. կնքված*
*ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/32 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | Անվանումը | Չ/մ | Ընդհանուր քանակը | Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝** | | | | | | | | | | | | |
| | | | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | Ընդհանուր գինը |
| | 39181200/25 | Աշխարագրություան լաբորատորիայի համար պարագաներ | լրակազմ | 1 | - | - | - | - | - | - | - | - | - | 7,020,000.00 | 7,020,000.00 | 7,020,000.00 | **7,020,000.00** |
| | **Ընդամենը՝** | | | | | | | | | | | | | | | | **7,020,000.00** |

...ման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:
...Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվելու է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ս. Վրացյան 83
Բանկ՝ ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ՝ 900011048413
ՀՎՀՀ՝ 02550991

Տնօրենի պաշտոնակատար՝

---------------------------- Գ. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Անտարես» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 50ա/1
Բանկ՝ «Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 193003265066010
ՀՎՀՀ՝ 02519531

գործադիր մարմնի ղեկավար՝

---------------------------- Ա. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2.1
«10» 10 2025թ. կնքված
ԿԾԿԾԻԴ-ԳՀԱՊՁԲ-25/32 ծածկագրով պայմանագրի

# ԳՆԱՑՈՒՑԱԿ
## առաջարկվող ապրանքների ցանկի (բացվածքի) միավոր արժեքների

| N° | Անվանում | Չափի միավորը | Քանակ | Գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Թեմատիկ էլեկտրոնային նկարներ և անիմացիոն էսքիզներ (քարտեզագրական պրոյեկցիաներ, Արեգակնային համակարգ, Երկրագնդի կառուցվածքը, քամիների տեսակներ, լանջային պրոցեսներ, հրաբուխ, երկրակեղևի կառուցվածք, ռելիեֆի տիպեր) | Հատ | 1 | 24800 |
| 2 | ՀՀ միներալների նմուշների հավաքածու | Հատ | 1 | 132000 |
| 3 | ՀՀ հողերի նմուշների հավաքածու | Հատ | 1 | 103200 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ս. Վրացյան 83
Բանկ՝ ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ՝ 900011048413
ՀՎՀՀ՝ 02550991

Տնօրենի պաշտոնակատար՝

------------------------------ Գ. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Անտարես» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 50ա/1
Բանկ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930032650660100
ՀՎՀՀ՝ 02519531

գործադիր մարմնի ղեկավար՝

------------------------------ Ա. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 3*
*«____» __________________ 2025թ. կնքված*
*ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/32 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
հվհհ _________________________

Պատվիրատու
________________________________
________________________________
գտնվելու վայրը ________________
հհ_____________________________
հվհհ___________________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«     » «              » 20     թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
__________________________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    »  «              » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը, Պայմանագրի 1.2 հավելվածով ըստ դպրոցների խտության սահմանված Վաճառողի և դպրոցների միջև ստորագրվելիք հանձնման-ընդունման ակտերը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«____» __________________ 2025թ. կնքված*
*ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/32 ծածկագրով պայմանագրի*

**ԱԿՏ N**

**պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _________________________ -ին կնքված N ______________
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2025թ. __________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________________<br>ազգանուն, անուն | ______________________<br>ազգանուն, անուն |
| ______________________<br>Ստորագրություն | ______________________<br>ստորագրություն |

*Հավելված N 4*
*«____» __________________ 2025թ. կնքված*
*ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/32 ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

__________ֆինանսական գործակալի անվանումը________ հայտնում է, որ .

1. _______գնորդի անվանումը____-ի և __վաճառողի անվանումը_-ի միջև «--» 2025թ. կնքված «---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և _______վաճառողի անվանումը_______-ի միջև «--» 2025թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

______________________________________________ ______________

ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 2025թ.